

Պիսո Հ պապի երկու նախորդների օրով, կաթոլիկներին համալիւայտմ արգելուած էր քաղաքական ընտրութիւններին որևէ է մասնակցութիւն ունենալ: Ենորհիւ այն բանի, որ վերջերս հանգամանքները շուրջ փոխուեցին, կաթոլիկներին Պիսո Հ պապը թոյլատրեց մասնակցել ընտրութիւններին, բայց հրահանգեց, որ կաթոլիկ եկեղեցուն հակառակ մարդկանց չընտրեն: Այդ թոյլատրութիւնը տեղի ունեցաւ սօցիալիստների և հասարակապետականների գէմ աւելի ուժեղ կերպով մաքառելու և այդ արդիւնքն էլ տուաւ, որովհետև պահպանողականներն ուժեղացան կաթոլիկներից ընտրուած երկու պատգամաւորների ձայներով:

Յիշեալ թոյլատրութիւնը լաւ տպաւորութիւն թողեց ըուլոր կաթոլիկների վրայ և ընդունուեց որպէս գրաւական եկեղեցու և իտալական թագաւորութեան մօտալուտ հաշտութեան:

Ա. Եղիշական (Եպիսկոպոսական) Եկեղեցի

Ամերիկայի Բոստօն քաղաքում անցեալ հոկտեմբերի 5 ից մինչև 25 ը գումարուած էր Ամերիկայի Միացեալ Նահանգների եպիսկոպոսական եկեղեցւոյ դլխաւոր համաժողովը, որին ներկայ էին եպիսկոպոսներ, ստորին հոգեոր պաշտօնեաներ և քաղաքացիք, որոնք ժողովւած են երեք տարին մի անգամ: Օտար երրացի փոքրաթիւ հիւրերի թւում ներկայ էր Անգլիական եկեղեցւոյ գլուխ Քենտրոների արքեպիսկոպոսը: Քննութեան նիւթ եղած Խնդիրներից ամենից շատ ժամանակ և ուշագրութիւն գրաւեց իւր վերայ ամուսնութեան և ամուսնալութեան խնդիրը: Զանազան դաւանական գաւանութեան ներկայացուցիչներից ընտրած մասնաժողովը քննում էր այս տարի այն ընդհանուր չարեաց գէմ մաքառելու միջոցները, որոնք սպառնում են քայլացել ընտանիքը, և գնուեց գեմել ժողովրդին առանձին շրջաբերականով՝ շեշտելով ամուսնութեան որբութիւնը, և նրան թեթև վերաբերուելու կործանիչ հետեւանքները: Որպէս ամենաազական միջոցի, այդ բանի գէմ մատնանիշ եղան, որ պէտք է խստացնել եկեղեցւոյ վերաբերմունքը գէպի ամուսնալութեական խնդիրներն և բաժանուած ամուսնուները: Արովհետեւ ներկայ եկեղեցական օրէնքը բաժանուած ամուսնուներից անմեղ կողմին իրաւունք է տալիս նորէն ամուսնանալու, ուստի ժողովում փոքրեցին վերացնել այդ բացառիկ օրէնքը և խոտիւ հետեւ, որ

ամուսնութիւնը մնայ անքակտելի; Այդ ժողով և խմբագրուեց եկեղեցական կանոն, և պատգամաւորական ժողովում առաջն քուէարկութեան ժամանակ 214 ձայնով ընդունուեց ընդդէմ 191 ձայնի: Բայց այսուհետեւ երբ ընդունուած ոռվորութեան համաձայն նորից քուէարկուեցաւ նուև թեմերում և դատակարդերի կողմից, ձայնից բաղմութիւն չըստացու եց նրա օգտին, և այդ շնորհիւ այն հանգամանքի՝ որ ձայները բաժանուեցին, և քուէարկութեան այդ ձեւի շնորհիւ նախագիծը չանցաւ: Դեռ այդ ոչինչ՝ նոյն իսկ եպիսկոպոսական ժողովում կանոնի ընդունուած նման նախագիծը պատգամաւորների ընդդիմախօսութեան շնորհիւ ևնթարկուեց ազմատական վորոխութեան և փոխանակ արգելելու բաժանուած ամուսինների պոտակը, միայն որոշ չափով դժուարացրեց այն: Կանոնի վերջնական ձեւը որոշում է, որ՝ Եկեղեցու ոչ մի պաշտօնեայ իրաւունք չունի պատակելու այն անձին, որի ամուսնութիւնը լուծուել է պատակց յետոյ՝ տեղի ունեցած պատճառներով, և եթէ նախկին կողակիցը կենդանի է: Բայց այս կանոնը պարտադրապես չը պէտք դորձադրել շնորհեան համար լուծուած ամուսիններից անմեղ կողմի վերաբերութեամբ, միայն ամուսնուալուծութիւնից մինչև ամուսնութիւնը պէտք է անցնի անպատճառ մի ամբողջ տարի Եկեղեցական իշխանութեանը պէտք է ներկայացնել դորձի վերաբերեալ փաստերը՝ ինչպէս և դատարանի վճռի և որ ծանադրութեան պատճենները և նաև աղացցց, որ դատի ժամանակ ներկայ էր մեղադրուած կողմը կամ ներկայացուցիչ ու պաշտպան աւներ գործի ժամանակ: Եկեղեցական իշխանութիւնը գործի մասին իրաւուցանական եղանակացութիւն ստանալուց յետոյ, պարտաւոր է զրաւոր յայտնել, որ դորձը միանդամայն համապատասխան է օրէնքի պահանջներին: Եկեղեցւոյ պաշտօնեան չը ցանկացած դէպքում, իրաւունք պէտք է ունենայ հրաժարարուելու այդպիսի պահակադրութիւն կատարելուց:

Եթէ եկեղեցու պաշտօնեան հիմնական պատճուռ ունեցաւ կառածելու որ կոնֆիգուրացիայի ևնթարկուել, կամ մկրտութիւն և հաղորդութիւն ընդունել ցանկացող անձն Աստուծոյ Բանին և եկեղեցւոյ կարգապահութեան հակառակ ժամանակ է ամուսնութիւն, նա նախ քան նրան լիշեալ խորհուրդներին մասնակից անելը, պարտաւոր է տեղեկացնել եպիսկոպոսին, բայց եկեղեցւոյ պաշտօնեաններից ոչ մինը իրաւունք չունի մերժելու մահուան վտանգի հասած աղացիանը լինդիրը:

Համաժողովի վճիռներից ամենանշանաւորն էր վճռաբեկ ատեաններ հիմնելը եպիսկոպոսների, քահանանների և դպիթների:

համար, որպիսի նպատակաւ և բոլոր թեմերը բաժանուեցին դատաստանական ութը շրջանների: Զընդունուեց Ասառւածաշընչի վերաբննուած թարգմանութեան գործածութիւնը ժամերգութեանց ժամանակ:

Եկեղեցու կացութիւնը քննող մասնաժողովի հաշուեցոյցի մէջ ըերուած էին հետեւեալ վիճակագրական տեղեկութիւններ:— Ամերիկական եպիսկոպոսական եկեղեցին բազկացած է 62 թեմից և 23 միսիօնարական շրջաններից: Հոգեոքականների թիւն է 5149, որոնցից 94-ը եպիսկոպոս, 4,711 քահանաց և 318 դպիր: Ծխերի թիւն է 3,967: մասնակցողներն են 804,000 հոգի: վերջին 3 տարուայ ընթացքում մկրտուել են 182,618, և առաջին անգամ հաղորդուել 143,471: օծուած են 314 եկեղեցիներ: Կրօնական և բարեգործական նպատակաւ եղած նուիրարերութեանց գումարը 47 միլիոն գումարից աւելի է, որոնցից ծխական կարեքների վրայ ծախուել է 39 միլիոն գումար (78 միլիոն ռուբլի), իսկ թեմական կարիքների վրայ՝ 3,800,000 գումար: Հետեւեալ համաժողովը կայանալու է Վերգինիա նահանգի Ուղմոնդ քաղաքում 1907 թուին:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Որքան մեծ ոյժ և նշանակութիւն էր տրուում զանազան քաղաքական նպատակներով կաթոլիկներին՝ Գերմանիայում, այնքան աւելի և աւելի զարկ տուաւ այնտեղ այդ հանգամանքը աւետարանական զիտակցութեան, որն արտայայտում է աւետարանական եկեղեցիներն արտաքուստ միացնելու ձգտմամբ: Այդ ձգտման առաջն արդիւնքն էր «Գերմանական Աւետարանական եկեղեցւոյ կոմիտէի» կազմակերպութիւնը, որը հանգիսանում է եկեղեցական եշխանութիւնների միութիւն, ընդհանուր ըոլովական եկեղեցւոյ շահերը պաշտպանելու: Բայց եկեղեցական եշխանութիւններն այդ պաշտպանութեամբ չը բաւականացան, և կարիք էր զգացւում աւետարանական եկեղեցիներն աւելի հաստատուն կերպով միացնելու, որն ընդդրեկը ոչ միայն եկեղեցական եշխանութիւններն, այլ և աւետարանական ժողովուրդը, և այդ ի հարկէ նըա ներկայացուցիչների Միոդի միջոցաւ:

Անցեալ հոկտեմբեր ամսին Գերմանիայում միաժամանակ կայացաւ երկու համաժողով, յատկապէս յեշեալ մտքով եկեղեցական սինօդ կազմակերպելու: